

ըստ ոմանց՝ թորոսեւիչ նիկոլ եպիսկոպոսի ժամանակ եղած համարձակ ձեռնամիսութիւնը մեր ժամանակ մատեան ներուն մէջ և անպէտ ծիսափոխութիւնք եղած են պատճառ ազգիս օտարութեան, այլ այնպէս կը կարծեմ՝ որ եթէ մերոնք լըզրունին պահած լինէին և խորչէին, ինչպէս առաջ, անխոտիր

ինամութենէ, նիկոլի բռնութիւնք ոչ միայն օտարանալու, այլ ազգութիւնն ամբողջ պահելու մի զօրաւոր պատճառ կը լինէր. ըստ առածին և բռնութեամբ գեղեցկութիւն չի լինիր»: Այլ մեք դառնանք դարձեալ առ Տիրամայրին Հայոց:

Կը շարունակուի:

Հ. Քերովը Վ. Քոհեւերեան

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻՔԱՍԵԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ

ԸՆՏ Մ. ԽԱՐԵՆԱՑԻՔ

(ՏԵՇ ԷՂ 11. — Շարունակութիւն և վերչ.):

ԳՈՅԻՆ ԺԳ

1. Կոր պատմութիւն Հայոց բազաւորութեան, ըստ արդի բանափրաց. — 2. Ասորեստանի և Վանաց իամ Արմենական արձանագրութիւնն. — 3. Վերջնական եղակացութիւն:

Բաց ՚ի տոհմային զրաւոր և անդիր աւանդութեանց և յիշատակարաններէն, թէ իրաւցընէ անյիշատակ ժամանակներէ ՚ի վեր եղած են առ տէրութեամբ եկիպատացւոց և Ասորեստանաւայց, Մարաց կամ Արեաց՝ Հայ թագաւորներ և իշխաններ, կը ցուցընեն այսօր նյոյն խակ եղիպատացւոց թիրայիթի, վանայ, Խորսապատու, բխսիդունի, Արարատայ, կարնոյ և Ասորեստանաւայց արձանագրութիւններն, որոց ընթերցման յառաջիսաղացութեամբ՝ հետզհետէ նորանոր աշխարհագրական և յատուկ անուանք տեղեաց և անձանց մեզի կը ծանօթանան. որք թէպէտ և շատ անգամ Մարիբասեան և տոհմային պատմագրութեան ա-

նուանց և տեղեաց հետ նմանութիւն շեն ցուցըներ արտագին ձեռվ, բայց իսկապէս նոյն են. վասն զի այդ կարծեցնեալ տարբերութիւնն սեպաձն արձանագրութեանց և անոնց ընթերցման կերպէն կը կախուի, որոց ընթերցման գծուարին հանգոյցն դեռ չէ լուծուած բոլորովին, և զօրս իրարմէ շատ տարբեր հնչմամբ կը կարդան արզի բանասէրք:

Փիկիպատոս Շմիթ հւր Արևելեան ազգաց հին պատմութեան (ի.թ. Էջ 568) մէջ կըսէ. «Եթէ Մ. Խորենացւոյն հաւատանք՝ ոչ միայն թուելու ենք զշայատանը բարելոնական հնագոյն տէրութեանց մէջ, ՚ի ներքոյ իզմիդազոնի և խամմարութիայ, այլ անդր ևս ձգել անոր կազմութիւնը մինչև ցԱնուշաւան թագաւորի մը անկումը ժի՞ դարուն մէջ»: Սակայն երևելի և բազմահմուտ պատմաբանն և հնագէտն՝ ասով գոհ շըլլալով՝ գեռ աւելի հնագոյն և ստուգապատում վկայութեանց կը դիմէ, և մինչև ութեատաներորդ հարստու-

թեան Փարաւոններու և ժամանակ կը հանէ Հայոց զինուորական զօրութիւնը՝ հեսեեալ խօսքերով. և Հաւանականագոյն ևս է վկայութիւնն եղիպտական յիշատակարանաց, որբ կը ներկայացընեն մեզ զթութէս երրորդ, որ տիրելով Հռութեաց, Միջագետաց, անտի կը զիմէ հետամուտի լերինս ինեմնիներու (Remenen) կամ Արմենաց (Armenen): Երբ եգիպտական նախագահութիւնն Միջագետաց մէջ տեղի տուաւ ասորականին, այն ժամանակ կը թուփ թէ եղած ըլլաց Հայաստանի նուաճումն Նինիգ-Բալ-Զիրայի ձեռքով, և այն ատենէն Ասորեստաննեաց պաշտամունքն հաստատուեցան Հայաստանի մէջ, և առեցին մինչև ցպատմական ժամանակիներ »:

Ինպէց Հայաստանի հարաւային-արեւելեան կողմը կը դանուէր այն ժամանակին 'ի վեր մասնաւորապէս 'ի բնութենէ պաշտամանեալ գաւառ մը, վան. ուր՝ ինչպէս հարաւէն Նպատ լերանց՝ պյասպէս ալ միւս ամէն կողմէն ուրիշ բարձրագոյն լերանց շղթաներով շրջապատեալ ըլլալով, ամենագիւրին էր, կ'ըսէ Ռայլինսըն (Հատոր Ա. էջ 26), զի՞նուորական զօրութեան մը հաստատութիւնն և բարձաւաճումն: Եւ արդարեւ աստ և միայն աստ Հայաստանի ամէն կողմերէն աւելի կը դանենք ամենամեծ և բարեկարգ միապետութեան մը գոյութեան հետքերը, Ասորեստանեաց և Մարական իշխանութեան շրջաններուն մէջ, Արձանագրութիւնք Վանայ՝ կը ցուցընեն մեզի ցեղապետութիւնը ինչ անդէք քան մէջ վկայութիւնը ունեցող սեպաձև գրութիւններէն: Այս մեծանուն հնագիտաց երկուքն, կ'ուղեմը ըսել Մասրերոյի և Լընորմանի, Պօդգյոյի և Օբէրգի՝ մեզի բոլորովին նոր և հետաքրքրական պատմութիւն մը կու տան, հանելով անշուշտ վերսիշեալ և ամենամեծ հնութիւն ունեցող սեպաձև գրութիւններէն: Այս մեծանուն հնագիտաց երկուքն, կ'ուղեմը ըսել Մասրերոյ (Պատմ. արեւ. աղջ. Գիրք. Դ. Գլ. Բ) և Լընորման (Պատմ. հատ. Ա. էջ 455-472) կ'ըսէն թէ յամին 721-704 նախ քան զբրիստասու, Սարեւոքին թագաւորի ժամանակ՝ մեծացեր էր Ա-

ղաքականապէս և թէ զինուորական զօրութեամբ կը գերազանցէին քան զամենայն գուառուս Հայաստանի: Թագաւորք վանայ՝ էին երբեմն ուսերիմ և ահարկու թշնամիք Մարաց. և իրենց տիրապետութեան հետքն անգամ թողուցին՝ ոչ միայն այն բարձրաբերձ գագաթանց վրայ, որբ Որմիոյ լին բերանը կը հասնին, այլ նոյն իսկ Միանթապի մակարգակին, և ներքին ծովուհարացին ափանց վրայ. ուստի և հաւանականագոյն է՝ թէ ժամանակաւ տիրեցին ըստ մեծի մասմին Մարաց և Ատրպատականի. մինչեւ որ յետոյ Փըրաւորէս Մարի ձեռքով կորսնցուցին իւրեանց հզօր միապետութիւնը:

Պականի Փիլ. Շմիթ աւելի հաւանական կը համարի թէ թագաւորք Հայոց կամաւ դաշնակցեցան Մարաց հետ Ասորեստանեաց և Սկիւթացոց զէմ գնելու համար, որոց թագաւորութեան զանազան պատերազմներ կը յիշատակեն 'ի Հայս, և իրը թէ անոր հարաւային մասն իսկ նուաճած ըլլան. բայց չի կրնար երկարատև եղած ըլլալ այն, կը յաւելու Փ. Շմիթ:

Ցիրասի, եթէ ուշ զնելու ըլլանք Մասրերոյի և Լընորմանի, Պօդգյոյի և Օբէրգի՝ մեզի բոլորովին նոր և հետաքրքրական պատմութիւն մը կու տան, հանելով անշուշտ վերսիշեալ և ամենամեծ հնութիւն ունեցող սեպաձև գրութիւններէն: Այս մեծանուն հնագիտաց երկուքն, կ'ուղեմը ըսել Մասրերոյ (Պատմ. արեւ. աղջ. Գիրք. Դ. Գլ. Բ) և Լընորման (Պատմ. հատ. Ա. էջ 455-472) կ'ըսէն թէ յամին 721-704 նախ քան զբրիստասու, Սարեւոքին թագաւորի ժամանակ՝ մեծացեր էր Ա-

1 Պէսք չէ զարմանալ եթէ առ Աւելիքոսի Պամփիւթացւ գտնուած (Պատմ. Աւեր. Բ. Նար. էջ 18) Ալեքսանդր Բազմավիպի վկայութեանը հաւաքառ ընծայենք, որ նա մինչև քան գար անդէք կը ձգէ քան թիրապտութեանեալ ըսելով (թէ «Հայոց Փիւնիկեցւոց դէմ արշաւանք մը ըներով յաղթեցին անոնց և Ասորեստան եզօրորդին գէրի բռնեցին»): Եւ իրէնէս Կուտապը նոյնը կը հաստատէ յամին 1879 հրատարակուած Հայոց պատմութեան վրայ ը-

բած բանախօսութեան մէջ: — Արդ յամին 2000, այսինքն Արքահամ նահապեան ժամանակէն կը ցուցընեն մեզի Ա. Գիրք և հեթանոս մատենագիրներ (թէ Փիւնիկեցւ և Կամ հնագիտաց Անդրեան բարգաւոր իսկ եթէ սոսուգիւ Հայք յաղթեցին անոնց, նշան է թէ անոնց աւելի զօրաւոր էին և գուցէ հին, որով լւա ևս կը հաստատէ Մ. Խորենացոյ վկայութիւնն:

սորեստանի պէս պատերազմական և արինարբու ազգն՝ կորսուեամբ այն դրացի պետութեանց, զօրս 'ի վեր անզը յիշեցի՞ք: Ապա դարձացին նորա իրենց բոլոր զօրութիւնն Ռւրարդւոյ կամ Արարդւոյ (Արարատեան թագաւորութեան դէմ), որ հիւսիսային կողմէն իրեւ անմերձենալի և զօրաւոր ամքարտակ մը կը կանգնէր Ասորեստանեայց ամենի արշաւանաց դէմ, իւր պարսպապատ լեռներով և բարո. յական և զինուորական զօրութեամբ. վասն զի անոր իշխանն Մեծին Ցիզրանյա պէս Նայիրի, Աղճնեաց, Ծոփաց, Վանյ (Մաննայ՝ ըստ արձանազրութեանց), Մշոյ (Մուսափիրի), Միզուեսի կամ կարնոյ գաւառուն, Միլիսի, և այլց գաւառուն գորգիկ և դրացի թագաւորութիւնները կամ լաւ ևս նախարարութիւնը իրեն հետ զաշնակից ըրածքուչեան ցեղի ամենայն կերպյարձակմանը կը ջանար ընդդիմանալ: — Թակղամթ կամ թուոկղոմթ — աբաղասար Ա. յամին 1130 յարձկած էր արդէն Արմենից հարաւային մասին գաւառուց (Նայիրի) վրայ. և անոր յաջորդներն նուածեցին զայն իններորդ գարուն մէջ, Ասուր-Նազիր—աբալ 883ին ուղեց առանձին Մաննայի (Վանոյ) դէմ կուուիլ, զիտոնալով անշուշտ թէ այն կերպով կարելի էր միայն զմիւրարդիս խոնարհեցընել, որոց ամբաւ գանձուց և փառաւորութեան համար կը մախային. ստակայն ինքն չյաջողելով՝ անոր յաջորդն Սաղմանասար Գ. յարձեկեցաւ Ռւրարդւոյ վրայ. և 844ին յաղթեց անոր Արամէ թագաւորին. և յամին 832 իրեն յաջորդն յաղթեց Սատուրի. բայց այսու ամենայնիւ չկըցաւ նուածել զայն. և հարազատ Հայկաղունիք մեր և արիւնակից իշխեցովք Արարատեան թագաւորութեան և տանս Հայոց, և կամուրիշ հայ ցեղի մը, ըստ Մարքրոյի և Լընորմանի, կացին տեարք բնիկ երկրին իւրեանց:

Ըստ բազում գլխոց՝ բայց աւելի բաղաքականապէս և բարոյապէս օգուտուեցան Ռւրարդէք Ասորեստանեաց

ստէպ յարձակմունքներէն և սերտ վերաբերութենէն քան թէ զնասուեցան: Արմենական ըստուած սեպաձև գրութիւններէն կամ մատենագրութիւնն՝ այն ժամանակ սկսան և ծաղկեցան Պելիտուրիսի Ա. և Լուտիպրեւոյ թագաւորաց ժամանակ, ըստ սեպաձև արձանագրութեանց :

Սակայն Ասորեստանցիք յետո չէին կրնար կենալ իրենց նպատակէն, քանի որ իրենց ախոյշեանն, այսինքն Արարատայ պէս բարզաւած թագաւորութիւնն իրենց զիմաց կանգուն կեցերէր էր. որով թուոկղամթ — աբաղասար նորէն գիմեց այն երկրին վրայ, և այս անգամ Ռւրարդւոյ թագաւորն Սարտաշարաց յաղթուեցաւ. բայց 734 ամին հաշտութիւն խնդրելով՝ նորէն այն թագաւորութեան ինքնավարութիւնը պահեց:

Յետ թուոկղամթ — աբաղասարայ եղան Սաղմանասար Բ. Գ. Դ. թագաւորներն, որը բազմութիւ արշաւանքներ ըրին յայսկոյս և յայնկոյս Եփրատայ: Բացի այն 12 մեղր բարձր կոթողէն՝ որ կը գտնուի Բրիտանական թանգարանին մէջ և որոյ վրայ գրուած և նկարուած կը տեսնուին Սաղմանասար Բ. յաղթութիւնքն, վերջերս գտնուեցան անոր պալատին 12 պլնձեայ խորաքանդակ սեպամին, յորս բանասէքը Կընթեռնուն այն թագաւորին Հայոց հետ մղած պատերազմները, զօրս 'ի վեր անդր յիշեցինք, և Հայք իսկ 'ի մէջ այլոց կը տեսնուին իրենց յատուկ զգեստուքն և զինուք հանդերձ, ըստ վկայութեան ականատես բանասիրի ուրամն:

Սարտայի յաջորդեց Մինուաս Առաջին. բայց մասնաւոր յիշատակի զործ մը չի պատմուիր ասոր վրայ: Սակայն իւր որդին Ռւրուա կամ Ռւծա՛ ահաւոր և ուխտեալ թշնամի եղաւ Ասորեստանեաց ցեխանս իւր, որով թէ ինքըլին. քը և թէ իրեն դրացի և համացեղ փոքրիկ իշխանութիւնները Ասորեստանեաց ազգեցութենէն ազատելու վախճանաւ՝ չանաց Մաննայի թագաւոր.

ըը քակել Ասորեստանեայց դաշնակ-
ցութենէն . և երբ չյաջողեցաւ, միա-
բանեցաւ Ռւրսա (Հրաչէ) Զիգար-
տուի թագաւորին հետ, ապօտամբե-
ցընելվ այն երկրին բնակեցը Ըս-
րեստանեայց դէմ:

Ռւրսայի մեծամեծ գործերէն մէկն
այս կը յիշուի՝ թէ 22 թիրդապաղաք ա-
ռաւ Մարեռքինի դաշնակից Ռւլլասուն
թագաւորէն : Բայց ափասո որ Ռւրսա
իւր յաւերժայիշատակ արութեամբքն
հանդերձ զիրցաւ վանել խսպառ զլա-
րեռքին, և ոչ իսկ կարայ բոլոր այն
դրացի (անշուշու և ազգակից) նախա-
րարութեանց միութիւնը իրենց կեն-
դրոնական զօրութեան՝ Արարատեան
թագաւորութեան հետ՝ անգակ պահել:
Ուստի Ազատն Մասիս իւր աննկուն
բարձրութեամբքը՝ հարկ էր որ վեր-
ջապէս խոնարհէր պատերազմական
հանճարով և քաջութեամբ երևելի՝
Ասորեստանեայց զինուորական զօրու-
թեան զիմաց, որոց առջև ոչ միայն
անմատչելի լեռներն ու ձորերն, այլ և
դետերն և անոնց նման բիւր ամբու-
թիւնք անդամ տեղի պիտի տային: Եւ
իրաւցընէ, ըստ Մասքերոյի, Սարեսու-
քին նուաճելով շուտ մը եղած ապշո-
տամբութիւնները, 744ին՝ հիւսիսէն
զիմեց Ռւրարդայ վրայ. յաղթուեցաւ
շարաչար Ռւրսա, անոր քաղաքներէն
շատերն Ռւլլուսունի տրուեցան և աւե-
րեցաւ Ռւրարդի: Այս ձախորդու-
թեանց զիմանալըվ հայկազունի Ան-
նիբաղն՝ ինքզինքն սպաննեց:

Այսպէս ուրեմն կ'երեւի թէ Ռւր-
սայի մահուամբ՝ քանդուեցաւ ըստ
մասին Արարատայց թագաւորութիւնն,
և աւար եղած Ասորեստանի պատերազ-
մական զօրաց: Վերջապէս պէտք էր
որ Ասորեստանեայց անշաու աշխար-
հակալութիւնն և նինուէի և բարելոնի
արքունիքն և աշխարհահանդէսքն՝ Ա-
րարատանան տան բազմադարեան բազ-
մագանձ ոսկեով և պատուական ականց
ճոխութեամբք լցուէր յագենար, և ա-
պա մեղկէր և կործանէր. ինչպէս առ
Մեծն Ցիգրանաւ լիցուեցան և թուլ-

ցան Հռովմայեցւոց անմեղկելի լեգէոն-
ներն :

Ռւրսայի մահուամբ, որ ըստ վկայու-
թեան լընորմանին նոյն է ընդ հայազ-
դի Հրաչէի, թէպէտ և 55 քաղաք ան-
ցան Մարեռքինի, բայց Արարատեան
թագաւորութիւնն կամ Ռւրարդին բո-
լորովին չնուանեցաւ: Ռւրսայի յաջոր-
դըն Արդիստիս, որ է Մ. Խորենացւոց
կոռնակին կամ Սկայորդին, նորէն զօ-
րացաւ և վանեց զլլուրեստանցիս, և
շատ մեծամեծ գործեր ըրբ, դորս
գրումեց վանայ շրջակայ ժայռերան և
Շամիրամակերտի վրայ, զորս յետոյ
առաօպերէ ուսմկին՝ Շամիրամայ ըն-
ծայեցին:

Արգիստիսի այս վերջին յաղթու-
թիւնն նշանաւոր եղած պիտի ըլլայ, և
կամ այն է թէ Ասորեստանցիք իմա-
ցան՝ բայց շատ ուշ՝ թէ այնպիսի լեռ-
նային երկիր մը, որ իրեն դաշնակից
առած է շրջակայ համասեռ նախարա-
րութիւնքը, անկարելի էր բոլորովին
նուաճել և կարենալ միշտ նուաճեալ
պահել զանոնիք առանց մեծի մնասուց:
այս պատճառաւ անշուշտ կ'ենթա-
գրենք թէ անկէց վերջը մէկ մ'ալ շը-
գիմեցին՝ Հայու, այլ Մարաց վրայ դար-
ձուցին իրենց գենքերը: Ուստի բնակա-
նապէս պէտք էր որ անոնց հետ ունե-
ցած անընդհատ պատերազմներով ար-
տաքսապէս, և ներքսապէս ալ յաղ-
թեալ աղգաց ճոխ աւարաւը մեղկե-
լով գամ քան զգամ տկարանային: զի
այս է ամենայն աշխարհակալ աղգաց
վերջը:

Իսկ Հայք՝ բուն բնակիչը Արարատայ,
ընդ հակառակն մէկ կողմանէ բարո-
յապէս օգուտ քաղելով այն պաշտոպա-
նողական պատերազմներէն, մանա-
ւանդ վերջին փառաւոր յաղթութեան
յիշտակներով, և միւս կողմանէ ալ
երկարաւու խաղաղութեամբ և իրենց
երկրին բնատուր հարստութիւններով
պէտք էր որ վերջապէս զօրանային:
Եւ յիրաւի, եթէ ուշ գնելու ըլլանք
Հրէից գրոց պատմական վկայու-
թեանն, 625ին կամ երկու դար վերջը,

Մարաց և Բարելացւոց թագաւորաց հետ կը հրաւիրուի նինուէի վրայ նաև Արարատեան թագաւորութիւնն՝ իր դաշնակից և հարկատու նախարարութիւններով՝ ի միասին, և իրեւ գլուխ և շարժիչ անոնց ամենուն:

Հոս պատմութիւնն զարմանալի և ուրախաւէտ տեսարան մը կը բանայ ամէն եռանդուն և մեր նախնի քաջաց անցեալ յիշտակօք սնանող հայրենակի առջև: Ի լուր երեմիայի մարդարէագոչ ձայնին և գեռ շատ ժամանակ վրայ չանցած, ՚ի բարձանց Այրարատայ և Մասեաց կողերէն կարշաւեն գունդագունդ քաջ ալվեղնաձիգք Հայոց մեծաց և պղնձակուռ մեկնակացնիք որդւոց թորգումայ՝ ՚ի դաշտավայրս Ասորեստանի, ոչ միայն՝ ՚ի վրէժինդրութիւն ազգաց և ծողովդրեանն Աստուծոյ, այլ և իրենց հայրենի աշխարհն: մինչեւ որ կը կործանի Ասորեստանի մայրաքաղաքն նինուէ, և անոր կնամարդի և թոյլ թագաւորին Սարդանարապայ հետ մէկտեղ կայրին և կ'աշբնչանան բոյր արքունիքն: իսկ Հայք վերստին լցեալ իրենց հայրենի ոսացուածովք՝ կը դասանան իրենց աշխարհը, նոր միապետական ինքնավարութեան գլուխ ունենալով զՊարոյք՝ զՊրդին Սկայորդույ, որոյ վրայ նախնաբար խօսեցանք: Բաց ասափ կը վկայէ նաև կտեսիամ՝ թէ նինուէի առաջին առման ժամանակ՝ Վարրակէս և Բելեսիոս իրենց օգնական ունէին նաև Արարատայ թագաւորներէն մին, որ Պարոյր կը կոյուէր, և թէ նա եղաւ բացարձակ տէր Հայաստանի. (Փիլպ. Շմիթ. Պտմ. արև. ազգաց. իդ. էջ 569):

Տիգրանայ յաջորդաց ժամանակ Արակայ անուամբ ուրիշ հայ իշխան մալ կը յիշուի Բիսիդունի սեպաձե արձանագրութեանց մէջ, առ Արեաց տէրութեամբ և ՚ի գլուխ Բաբելոնի ապրատամբաց, որոյ համար կ'ըսէ Դարեհ Վշտասպեայ, թէ և խարէութեամբ կ'ըսէր, ես Նաբոնեդայի որդին Նաբոգոդոնոսոր (հասարակ անուն Ասորեստանի թագաւորաց) եմ, և աղմկեց

զԲաբելոն »: Այս վկայութիւնս լաւ ևս կը հաստատէ Մ. խորենացւոյ և մեր ազգին մէջ եղած աւանդութիւնը, թէ իրաւցընէ Արծրունիք Ասորեստանի թագաւորաց սերունդ էին:

Իսկ գալով յետ ամենայնի այն թեթև և առարկութեան, թէ մարիբասեան երկասիրութեան մէջ զտնուող աղջային յատուկ անուանքն, ինչպէս առանց աղաւաղութեան կրցան հասնիլ մինչեւ Խորենացւոյ ժամանակն, և նա գտաւ անոնց ճիշդ հայեցի հնչմունքը, կրնայ պատասխան աղուիլ նախ՝ թէ այն կերպով որով հասան մեզի ուրիշ հին ազգաց նախապատմական ժամանակի թագաւորաց անուանքն: Սակայն մենք ուրիշ հաւաստիք առձեռն պատրաստ ունենալով, չենք ուղեր ծածուկ ճամբաններով մեր նպատակին հասնիլ, այլ ըստ կարելոյն գիմացնիս ելած գծուարութեանցը եթէ ոչ զիսովին գոհացուցիչ, այլ գէթ բանաւոր լուծում մը տալ կը փափաքիքնք: Առ այս յիշենք նախ վերը մէջ բերուած իւաւինսընի կարծիքը՝ Ասորեստանեայց և Արեաց արձանագրութեանց մէջ եղած յատուկ անուանց գրութեան նկատմամբ, թէ ինչպէս մերին առանձին տառով մը կը գրէին, մերիթ զաղափարական և մերիթ արաբական թուուց պէս յատուկ նշանագրով, զրոս ապա ամէն աղջ կրնար իւր հնչմամբ և լեզուով կարդալ: Երկրորդ, կանխաւցուցիք թէ այն անուններէն շատերն կէս մը բերնէ բերան եկած աւանդութեամբ, կէս մ'ալ յանուն այն դիւցագունց մացած յիշտակարաններով և վիպատանական երկերով ծանօթ էին Հայոց: Ինչպէս էր օրինակ իմ Սոսրաւուն կամ սօսանեւէր, յանուն սօսեաց նուիրեալ Անուշաւանայ: Երրորդ, անհրաժեշտ հարկ մը չկայ և չի աղպահանջութիր որ այն անուանքն ամբողջ շապէս այնպէս պահուած ըլլան՝ ինչպէս գործածուած էին և գրուած ՚ի հնումն. այսպիսի ծզութեան կանոն մը ոչ Յունաց և Հոռովմայեցւոց պատմիչն պահեցին և ոչ իսկ այժմեան

լեզուաց թարդմանութեանց մէջ կը ը-
նայ պահուիլ թւոտի թէ Յոյն թարդ-
մանիչք քաղզէական մատենին, թէ
Մար Արաս և եթէ Խորենացի՝ կարելի
է թէ օտար հնչումն տուած ըլլան, ինչ-
պէս են օրինակ իմն կադմոս և կար-
դոս անուանքն. բայց այսպիսի զար-
տուղութիւն մը մեծ նշանակութիւն
չունի 'ի պատմութեան, ուր յաճախ կը
տեսնուին փոփոխութիւնք անուանց-
բաւական է միայն անոնց յատուկ և
ճիշդ պատմութեամբ և ժամանակա-
դրական կարգաւ զանազանել զանոնք
իրարմէ, ինչպէս կ'ընէին Եղիպատացիք,
Ասորեստանցիք և Պարթէք Փարաւուն,
Նարուզոյնուսուր և Արշակ Հասարակ
անուամբք յորջոյնելով իրնց թագա-
ւորներն 'ի պատմութեան, իսկ ա-
նոնց յատուկ անուանքն ազգային ա-
ւանդից և զիւանաց մէջ պահել:

Ուրեմն եթէ մինչև հիմնայ ըրած
քննադատական ապացուցութիւնին
'ի նպաստ մարիբասեան պատմութեան
և հնյոն Հայաստանի աւանդութեան,
զորս կու տան մեզի արդի սեպաձև
արձանագրութիւնք՝ եղրակացընենք,
այն ատեն կը տեսնենք թէ անիրաւ տեղ
մինչև ցայսօր մեղադրուած է Հայ Հե-
րոդոտոսն, և անոր դատաւորներն ինչ-

պէս որ պէտք է անոր խորը գեռ չեն
թափանցած. վասն զի ինչպէս փոքր 'ի
շատէ տեսնուեցաւ, դրեթէ մի ենոյն
հնութիւնը կու տան մեծին Հայաստա-
նի կամ Արարատեան թագաւորու-
թեան և իշխանաց Թորդոմայ տանը
կամ մեծին Արմենիոյ՝ հին աշխարհի
առ մեզ հասեալ յիշատակարանքն և
սեպաձև արձանագրութիւնք, (ըստ ար-
դի արեելազիտաց), որոնք մինչև ցարդ-
յայննեցան, ինչ որ տուին Մարիբա-
սեան կամ Մ. Խորենացւոյ աւանդու-
թիւնքն, թէպէտ և տարրեր անուա-
նակոյնութեամբ. որ աւելի բանասիրաց
տարաձայն ընթերցմանն ընծայելու է,
քան թէ իրապէս այնպէս եղած ըլլան
Ռւրեմն այսուհետև կը թողանք Մ.
Խորենացւոյ և Մարիբասեան երկասի-
րութեան գաաը՝ մեր պատուական վեր-
ծանողաց առողջ և ուշիմ քննադա-
տութեան. և մենք կ'եղրակացընենք
հուսկ 'ի վախճանի, թէ պէտք է պատ-
կառ կալ, մինչև որ գեռ աւելի ստոյդ
և պատմական հաւասարի որոշեն ա-
նոնց աւանդածին ստուգութիւնը, որ-
պէս զի շըլլայ թէ սուտ և անհիմն կար-
ծուած դիպաց դիմակաւն՝ ամենա-
սոյզ և պատուական աւանդութիւնքն
ևս անհետանան:

Հ. Բարսեղ. Սարդիսան

ՆՈՐ ՔՆԱՐ

ՀՐԱԺԵԾ Ի ՍԻՐԵԼԻՈՑ

Դու որ եկիր երկեցար,
իրու արև ինձ ծագեցար,
Ծընծութիւն մնձ պարզեցար,
Մի մոռանաւ, իմ սիրելի:
Իմ անընման, իմ լոյս արև,
Առոշանու վարդին արեւ,
Լավդ տառ են քեզ ըզբար,
Մի մոռանաւ, իմ սիրելի:
Ո՞չ, իմ աշուն երամ երամ
Իմ գեղեցիկ վարդ անթառամ,
Ի քոյ երկրէն ես կը զամամ,
Մի մոռանաւ, իմ սիրելի:

Ան իմ բազցըրիկ դու աղանի,
Ուկէ իւնձոր զարմանալի,
Գեղ անազին բիւր երանի,
Բարդ եկիր, իմ սիրելի:
Ան իմ թըլթիկ անուշնոսիկ,
Մի մոռանաւ դու մնձ իսիր,
Ո՞վ իմ ոցըտիս ընեն ուեկի,
Մի մոռանաւ, իմ սիրելի:
Իմ աղանի մեռոց ելաւ,
Լավա աշքեցոյս հեացաւ,
Քամի նայեմ 'ի մեր յԱսուան,
Մի մոռանաւ, իմ սիրելի: